

Թիւ 37 Փետրուար 2025

LUYS KIDS

ALL ABOUT
KOALA



Եկուր Սորվինք ու
Դաշնամք գիտունիկ

National Kite
Flying Day

**<<Բարեկենդան>>-ի
հեքիաթ**



LUYS KIDS

Տարի: 4, Թիւ: 37

Poseidon Yayıncılık Basım,

Organizasyon ve Tanıtım

LUYS MEDIA

<<Այս թիւին մէջ>>

Հրատարակութեան

Արտօնատէր

Արամ Գուրան

Պատասխանատու Տնօրէն-

Հրատարակութեան

Ընդհանուր Տնօրէն

Պելինտա Գուրան

Խմբագիր

Պարզեւ Սամուելեան

Տեսողական Արուեստի Տնօրէն

Արթօ Ժիլպէր

Գովազդ եւ Հանրային Կապեր
Յարութիւն Գուրան

Խմբագրական Կազմ

Սալբի Մուղալեան

(Լիբանան, Պէյրութ)

Շողեր Գրիգորեան-

Ազատեան

(Հայաստան)

Սարին Պայրամ

Սրբագրիչ

Արփի Թնկուեան-

Գանթարծեան

Հասցէ՝

Քուրթուլուշ Պողոսայ, Էօղէր

Շէնք

թիւ 125,

Շիշլի, Խմբանպուլ

Հեռաձայն՝ 0212 251 27 80

Ritim Baskı Sanatları Matbaacılık
Sanayi Ticaret Limited Şirketi

Y. Dudullu Mahallesi Necip Fazıl

Bulvarı Cad, Keyap Çarşısı F1 Blk

No:44/92 Ümraniye/İstanbul

Sertifika No: 45252



Շնորհակալութիւն
կը յայտնենք
Գարակէօգեան Տան
խնամակալութեան՝
Լոյս Քիտուրին
կատարած
օժանդակութեան
համար:



Այս Թիւխն Պտուղն է Մանտարինը

Ծանօթ է, որ
Մանտարինը շատ
օգտակար է
հիւանդ եւ թոյլ
օրկանիզմին
համար, քանի որ
ան կը պարունակէ
կենսաբանօրէն
գործօն նիւթեր:



Մանտարինի
պարունակած
հանքային նիւթերուն
մէջ կը գերակշռէ
<<փոթասիում>>-ը:
100 կրամ
մանտարինի մէջ
անոր քանակը կրնայ
համիլ մինչեւ 150
մլկ., որ կը համարուի
կարեւոր սնունդ
սրտանօթային
հիւանդութիւններու
ժամանակ:

Մանտարինի
կեղեւի
բաղադրամասերը
կ'ընկճեն
<<Սթաֆիլաքոք>>
մանրէներու աճը:



Մանտարինի՝ ամէնօրեայ
պարբերական
օգտագործումը կը
բարձրացնէ օրկանիզմի
դիմադրողականութիւնը,
յատկապէս՝
մրսածութենէ
յառաջացած
հիւանդութիւններու
պարագային:

Մանտարինի կեղեւի
պարունակած
եթերային իտերը
ունին
լարուածութիւնը
չէզոքացնող, ջղային
համակարգը
հանգստացնող
յատկութիւն:




Կեղեւը նաեւ դիւրին իւրացուտղ
օրկանական երկաթի շնորհիւ
օգտակար է տարաբնոյթ
սակասարիւնութիւններու
ժամանակ: Ան անհրաժեշտ է
քրոնիկ փորկապութեամբ
տառապողներուն:



Մանտարինի
հոտէ կը
խուափին
մժեղները:

Անոր կեղեւներով
պատրաստուած
թէյը լաւ միջոց է
փորհարութենէ
տառապողներու
համար:



Մնկային հիւանդու-
թիւններու
ժամանակ,
մանտարինին
հիւթը շփել մորթի
ախտահարուած
մասերը կ'օգնէ այդ
ախտահարուած
մասին
ապաքինման:

Կըսուի թէ
մանտարինի չորցուած
կեղեւներու եփուկը
խմելը որպէս
խորիսաբեր, կը
հանգստացնէ հազը, կը
մեղմացնէ
սրտիսառնուկը եւ կը
լաւացնէ
մարսողութիւնը:

Top 10 facts about KOALAS

1 Koalas are found in the eucalyptus forests of eastern Australia. They have grey fur with a cream-coloured chest, and strong, clawed feet, perfect for living in the branches of trees!

Koala means 'no drink'

2 The word "koala" is thought to originate from one of the Australian Aboriginal languages, Dharug, which roughly translates to 'no drink' or 'no water'. And this might explain why, in the Australian bush, koalas rarely drink water as the majority of their water intake comes from eating fresh eucalyptus leaves.

3 Koalas measure about 60cm to 85cm long, and weigh about 14kg.

4 Cuddly critters, aren't bears at all – they are in fact marsupials. A group of mammals, most marsupials have pouches where their newborns develop.

5 After a baby has been in the pouch for about six months, its mother begins to produce a special substance called pap. The joey feeds on this in addition to the milk it's already getting. Pap comes from the mother's intestines and contains bacteria that the joey needs to have in its own intestines so that it can digest an adult diet of eucalyptus leaves.



6

They don't live in social groups. They prefer a solitary lifestyle in the wild. Once young joeys become fully mature, they usually seek out new territory away from home and lead an arboreal lifestyle with minimal social interaction.

7

Koalas don't have much energy and, when not feasting on leaves, they spend their time dozing in the branches. Believe it or not, they can sleep for up to 18 hours a day!

8

They have an excellent sense of smell! Koalas rely heavily on their sense of smell to make better food choices and detect other koalas' scent markings on trees.

9

The lifespan of koalas, along with their body sizes, can differ between sexes. Male koalas usually live up to 12 years, whereas females of this species can live for much longer, up to 15 years.

10

At present, koalas face multiple threats in the wild, from deforestation, drought, disease, habitat loss, fragmentation, and modification to climate change. Bushfires are fairly common occurrences in the Australian outback, but as climate changes, more frequent and intense fires happen, which poses an increasing threat to koalas.



Գիտե՛՛՛

«Տառերու
Պուրակ»

1999-ին ԵՈՒԵՍՔՕ-ն
Փետրուար 21-ը հռչակեց
Մայրենիի միջազգային օր՝
ի նպաստ մայրենի
լեզուներու իրաւունքներու
ճանաչման:

ԵՈՒԵՍՔՕ- ի
ուսումնասիրութիւններուն
համաձայն,
արեւմտահայերէնը՝ մեր
մայրենի լեզուն վտանգի
տակ է: Ուստի, պէտք է
պահպանենք ու կորուստէ
փրկենք մեր մայրենին՝
աւելի սիրելով Հայերէնը,
կարդալով Հայոց
պատմութիւնը, գիտնալով
ու ապրեցնելով Հայ
մշակոյթը: Ուրեմն մօտէն
ծանօթանանք, «Տառերու
Պուրակ»-ին՝ Հայոց
Այբուբենի յուշարձանի
մասին:



Ա

Յուշարձանը՝
Հայերէն
Տառերու
Պուրակը
կառուցուած է
2005
թուականին
Հայոց գիրերու
ստեղծման
1600-ամեակին
առիթով:




Բ

Տառերու Պուրակին
մէջ զետեղուած են
Հայոց այբուբենի
տառերուն քարէ
զարդաքանդակները
եւ հայոց մեծերուն
յուշարձանները:



Գ

Յուշարձանի գաղափարին
Հեղինակն է Հայաստանի
գլխաւոր դատախազ
Աղուան Յովսէփիեանը:
Կառուցուած է
Ճարտարապետ Ֆրէտ
Աֆրիկեանին կողմէ:
Յայտնի
քանդակագործներն են՝
Սարգիս Ղարիպեան,
Արտուշ Պապոյեան,
Սամուէլ Յակոբեան:



Դ

Այբուբենին բացի,
այդ տեղ կը
գտնուի՝ Անանիա
Շիրակացիի,
Յովհաննէս
Թումանեան եւ
ընկերներնե,
Գրիգոր
Լուսաւորիչի,
Խաչատուր
Աբովեանի,
Միսիթար Գօշի,
Մեսրոպ Մաշտոցի
յուշարձանները:



Ինչո՞ւ խաբելը կամ սուտ խօսիլը անընդունելի է

Մարդիկ ուրիշներուն կը խաբեն տարբեր պատճառներով. բայց, եթէ կը յիշէք <<Բարեկենդան>>-ի հեքիաթին մէջ, օտար մարդը խաբեց կնոջ եւ իրմէ առաւ ալիւրը եւ իւղը.այս անձին կեղրոնացումը իր սեփական շահին վրայ էր:

Կան ուրիշներ, որոնք ուրիշներու կը խաբեն հասնելու իշխանութեան աթուոներու, կամ նիւթական շահեր հետապնդելու համար: Իսկ ուրիշներ՝ իրենց շահերը պաշտպանելու համար:

Հաւ, ովքեր են, որոնք շատ դիւրութեամբ կը խաբուին. գրեթէ միամիտ, անոսա եւ անփորձ անձերն են, որոնք դիւրիւն կը խաբուին, ինչպէս որ պատահեցաւ <<Բարեկենդան>> հեքիաթին մէջի միամիտ եւ անոսա կնոջ, որ նոյնիսկ չէր գիտեր որ Բարեկենդանը տօն է եւ ոչ թէ անձ:

Մանուկներու մօտ, այսինքն մեր մօտ խաբելու մարմաջը կը սկսի, պզտիկե կոչուած սուտերէ, խուսափելու համար որոշ ժխտական հետեւանքներէ կամ ինչ որ բան ձեռք բերելու ցանկութեամբ:

Այս վիճակէն դուրս գալու համար, նախ՝ պէտք է որ հասկնանք, թէ չկայ, <<պզտիկ>> կամ, <<մեծ>> սուտ. հապա՝ ստախօսութիւնը <<թոյն>> մըն է, որ կը թունաւորէ մեր էութիւնը:

Երկրորդ, պէտք է վստահութիւն ունենանք մեր շուրջը գտնուող շափահասներուն վրայ, որոնք կը յարգեն իրենց անկեղծութիւնը, ինչ ալ ըլլայ հետեւանքը:



Հաւ, մենք ինչո՞ւ կը ստենք կամ ուրիշները կը խաբենք:

- 1 Երբեմն, յայտնի կամ անյայտ զայրոյթն է, որ մեզի կը մղէ խարէութեան՝ մանաւանդ մանուկ տարիքին: Անոր համար շատ կարեւոր է ղեկավարել մեր զայրոյթը, որպէսզի խաբելէն կամ ստելէն հեռու մնանք:
- 2 Խաբելը կամ ստելը անազնութեան նշան է, որուն հետեւանքը յարաբերութիւններ եւ ընկերութիւններ քանդելն է. նաև՝ անվատահութեան զգացումի զարգացումն է: Խաբող անձը ժամանակի ընթացքին կը ճանցուի իբր խարդախ կամ ստախօս:

Վստահ, որ ոչ մէկս կը փափաքինք ստախօս,
անվատահելի համբաւ ձեռք ձգել: Ուստի, միշտ ճշմարտութիւնը
սիրենք ու սուտ չխօսինք:

National Kite Flying Day

National Kite Flying Day is celebrated on February 8th each year. It's a fun day where you can fly kites and enjoy the outdoors. Kite flying is a great activity for kids and families, and it has been around for thousands of years!

Here's a simple way to think about the day:

What's it about?

National Kite Flying Day is all about having fun with kites. Kids can go outside, run around, and see their kites soar high in the sky.

Why do people celebrate it?

Flying kites has been a fun tradition in many countries for a long time. In some places, it's even part of big festivals, like in India, where people fly kites during a special celebration called Makar Sankranti.

How can you celebrate it?

You can make your own kites at home, then take them outside to fly in the wind. It's a great way to enjoy fresh air, play, and be creative. Some places even have kite festivals with colorful kites to watch and fun competitions.

Flying a kite can feel like an adventure, and it's a great way to spend time with your friends and family on National Kite Flying Day!

Amusement

1

Count the objects and write the numbers.
Then solve the equations.





+

=



+

=



+

=



+

=

Amusement

2

Color the words that rhyme



Amusement

3

Picture Crossword

1 →



1 ↓



2




3 →



3 ↓



4



hug balloon card flowers
heart chocolate


Amusement

4

Color by number

Solve each equation and color

Red	Pink	Orange	Green	Blue
1 - 20	21 - 40	41 - 60	61 - 80	81 - 100



Amusement

5

Word Match

Use the list to write each word under its picture



List

- balloon
- roses
- cupid
- wedding
- cake
- card
- Valentine's Day
- gift
- letter
- chocolate
- hearts
- hug

Answer


$$\begin{array}{r} \text{2} \\ \underline{+ \quad 2} \\ \hline \end{array} = \boxed{4}$$

1

$$\begin{array}{r} \text{3} \\ \underline{+ \quad 3} \\ \hline \end{array} = \boxed{6}$$

$$\begin{array}{r} \text{4} \\ \underline{+ \quad 6} \\ \hline \end{array} = \boxed{10}$$

$$\begin{array}{r} \text{5} \\ \underline{+ \quad 5} \\ \hline \end{array} = \boxed{10}$$



2



4



hug



card



balloon



letter



wedding



hearts



roses



Valentine's Day



cake



Cupid



chocolate



gift

5



Եկո՛ւր Սորվինք Ու Դառնանք Գիտունիկ

Ա. Խաղալով սորվինք՝ Սուրբ Սարգիսին մասին:
Նախ պատասխանէ՛ Հետեւեալները՝ Ճիշդ կամ սխալ
գրելով, ապա՝ ստուգէ՛ պատասխաններդ:

- 1** Ս. Սարգիսը Հայ զօրավար էր:
- 2** Սարգիսը ունէր որդի մը, որոն անունը Մարտիրոս էր:
- 3** Պարսից Շապուհ թագաւոր Սարգիսին կը կանչէ եւ կը ճրամայէ որ
պաշտէ կրակը: Ս. Սարգիս Զօրավար կը մերժէ եւ կը քանդէ բագինը
(Հեթանոսական մեհեան):
- 4** Պարսիկ ամբոխը զայրացած՝ կը յարձակին Սարգիսին վրայ ու
կը սպաննեն զինք:
- 5** Նահատակուելէն տարիներ ետք, Մեսրոպ Մաշտոց անոր
մասունքները Պարսկաստանէն բերել կուտայ Հայաստան:
- 6** Սարգիս Զօրավարը կը սրբացուի Պարսիկներուն կողմէ, ոքանի որ
գլխատեցին զինք:
- 7** Հայ Ժողովուրդը Ս. Սարգիսի տօնին ալիւրով լեցուն ափսէ մը կը
դնէ տանտանիքը կամ պատշգամին եւ կը սպասէ Սուրբ Սարգիս
Զօրավարի ձիուպայտին Հետքը:

Ամգղետմզ ղվնմոռտավմզ
ղտղողտիտմվի վմտտնիտ՝ մժտց ղվտրեա ավչ հտտվեո մվ հեց
րոմի ղվմովլո քուամն ջկը ղվհովիտ մս ամս ոգ վղեղո մյոդթիսնիկնա
ամգղիտաշցմց գժտէի մովեմող մմար ղտղթիսնղուո
տոյ : մժտց ղվտրեա ավչ վմտիտմօց ովեմող մմար լզոռեո
ոց ղվյոտեշտուո ցոկ մժվուտ ղուո լզոն մյ հովիտ ղանգիսմովլո
ղվհօտ վովեմողուո ջ ղկմգղուովիտ մս իսո ղոհունմիսնսք նշկց

474

3

2

Ազգային կուսակցություն

Բարեկենդանը Տարբեր Երկիրներէ Ներս

Բարեկենդանը ուրախութեան եւ խրախճանքի օր մըն է: Այդ օրը հայերը կ'երգեն, կը պարեն եւ աւանդական ծաշեր կ'ուտեն: Տարբեր ազգեր եւս կը նշեն Բարեկենդանը, բայց ոչ՝ հայկական Բարեկենդանի նման: Տօնին անունը ուրիշ է, սովորութիւններն ու բարքերը տարբեր են:

Զանազան քաղաքներու մէջ մարդիկ կը ծպտուին,
փողոցները կը պարեն ու կ'երգեն:

Ծանօթանանք անոնցմէ մի քանիին՝

<<Ռիոյի Քարնավալ>>

Փորթուկալցիներուն Պրազիլիքերած
Բարեկենդանի այս տօնը աշխարհի
ամէնէն նշանաւորներէն մէկն է:

Սկսածէ 1723 թուականին եւ կը
շարունակուի մինչեւ օրս: Տօնին օրը,
ժողովուրդը զարդարուած, մեծ կառքերով կը տողանցեն Ռիօ
տը Ժաներոյի փողոցներուն մէջ, Սամպայի երաժշտութեան
կշռոյթներով: Անոնք հարուստ տարագներ հագուած կ'ըլլան:



<<Պինչի Քարնավալ>>

Պինչը պելծիքական փոքրիկ քաղաք մըն է, սակայն
անոր Բարեկենդանի տօնակատարութիւնը երկրին
ամէնէն կարեւորն է: Այդ օրը, փողոցներուն մէջ կը
յայտնովին տարօրինակ կերպարներ: Անոնքիրենց
գլուխներուն վրայ ունին ջայլամի փետուրներով

ծանրնգխարկ մը, զանգակներով գօտի մը, յարդով
լեցուած հաստ կերպասէ շապիկ մը եւ փայտէ կօշիկներ: Անոնք ժիլերն են.
անոնք կը շրջին քաղաքին փողոցներուն մէջ թմբուկներու ձայներուն
ընկերակցովթեամբ եւ փոքրիկներուն վրայ նարինջներ կը նետեն քսանչորս
ժամուան ընթացքին: Ժիլմը կարենալը լալու համար պէտք է Պինչի մէջ
ծնած ըլլալկամ Պինչի բնակիչ՝ նուազագոյնը՝ հինգ տարիներէ ի վեր:

<<ՎԵՆԵՏԻԿԻ ՔԱՐՆԱՎԱԼԸ>>

Վենետիկի Բարեկենդանի
տօնակատարութեան ծպտուելու
արտօնութիւնը սկսած է 1269

թուականին: Այդ շրջանին քաղաքը կը
դառնայ տօներու եւ ուրախութեան ընդարձակ
դաշտ մը: Վենետիկի Բարեկենդանին ամէնէն յատկանշական
դիմակը, <<պառթա>>-նէ, որյայտնուած է 18-րդ դարուն եւ
եղած է ամենակարեւոր բաժինը այս հանդէսին:



<<ՆԻՍԻ ՔԱՐՆԱՎԱԼԸ>>

Նիսի Բարեկենդանի տօնակատարութիւնը
ֆրանսայի ամէնէննշանաւորն է, որն սկսած է
1830-ին: Այս տօնակատարութեաննընթացքին,
կը տողանցեն խաւաքարտէ շինուած վառ
գոյնրեով մեծ կերպարներ



Հազարաւորն ծաղիկներով զարդարուած կառքերու
վրայ: Խսկյաջորդ օրը, այդ կառքերուն վրայ կանգնած տղաքն ու
աղջիկները ժողովուրդին վրայ կը նետեն այդ ծաղիկները:

Բ. Ակլատիզը

- Ակլատիզը Բարեկենդանի կերուխումի աւարտը աւետող տիկնիկն է: Անիկա պատրաստուած կ'ըլլայ սոխէ կամ գետնախնձորէ՝ վրան 7 փետուր խրած:

- Ակլատիզին նաեւ կ'անուանեն <<Պաս պապի>>:
- Պաս ըսել է Պահք:
- Ակլատիզին վրայի Եօթը փետուրները, որոնք Մեծ պահքի Եօթը
շաբաթները կը խորհրդանշեն, օրացոյցի դեր կը կատարեն.
Խրաքանչիւր շաբաթավերջի մէկ փետուր կը պոկուի եւ այսպէս,
յաջորդաբար՝ մինչեւ Մեծ պասը աւարտի: Մեծ պասի վերջին օրը
ակլատիզը պէտք է թաթիւել մածունի մէջ եւ նետել տանիքը:

- Հստ աւանդութեան, սոխը կը դառնայ մկան, խորիզ թեւեր, խսկ
ինքը՝ ակլատիզը՝ թռչուն, որ կը թռչի ու կ'երթայ յաջորդ տարի
վերադառնալու պայմանով...

LUYS KIDS



LUYS MEDIA